

ՀՀ Լոռու մարզի խորհրդի նիստի

25.11.2016թ.

ք.Վանաձոր

**Մասնակցում էին՝
Մարզի խորհրդի անդամները**

Հրավիրված էին՝

Մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանը, Հ.Թադևոսյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն.Սարգսյանը, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Ա.Խաչատրյանը, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարները, ՀԳՄՏԾ ղեկավարները, լրատվության, հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները:

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս-Ալպեր Լազուրի Ալի ռեգիոնի երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետ Ա.Նալբանդյան)

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրական և գերատեսչական իրավական ակտերի մասին մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին իրազեկելու մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն.Սարգսյան)

10 րոպե

3. Մարզի համայնքների 2016 թվականի բյուջեների 10 ամիսների սեփական եկամուտների կատարման մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյան)

15 րոպե

4. ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության ծրագրի վերաբերյալ.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյան)

15 րոպե

5. Մարզի համայնքներում 2016 թվականի բերքահավաքի, աշնանացանի և պտտության կողմից համայնքներին տրամադրված դիզելային վառելիքի, պարարտանյութի, սերմացուի բախշման արդյունքում կուտակված պարտքերի մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և
բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Ա.Շահվերդյան)
15 թույլե

6. Մարզի համայնքներում 2016 թվականի երրորդ եռամսյակում իրականացված
վարչական հսկողության արդյունքների մասին.

(Զեկուցող՝ հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ Ա.Սահակյան)
15 թույլե

Ա ռ ա ջ ա ր կ վ ե ց

ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝

1. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սեփական եկամուտների հավաքագրման
տարեկան պլանային ցուցանիշները կատարելու ուղղությամբ:

2. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել պարարտանյութի և սերմացուի
տրամադրման նպատակով հավաքագրվող գումարների գանձման և մինչև ա/թ
դեկտեմբերի 15-ը մուծման ուղղությամբ:

3. Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել, և պահպանել ու կատարել
Հայաստանի Հանրապետության օրենսդրական և գերատեսչական իրավական
ակտերի պահանջները:

4. ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության ծրագրի
կազմման նպատակով մինչև սույն թվականի դեկտեմբերի 10-ը ներկայացնել
համայնքների հիմնախնդիրները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ :

5. Համայնքների 5-ամյա զարգացման ծրագրերի կազմման և հաջորդ տարվա
բյուջեների ընդունման վերաբերյալ համապատասխան քննարկումներ կազմակերպել
և սահմանված ժամկետներում կազմել ռեալ, իրատեսական բյուջեներ և 5-ամյա
ծրագրեր:

Մ Ա Ր Զ Պ Ե Տ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ.0322/4-32-99/